ձուցանել զնա 'ի խորհրդոց իւրոց։ Ուստի հարկ եղեւ Գրիգորի ծանուցանել զյանդգնութիւն առնն 'ի Դուռն Արքայի, և զգիրն ամբաստանութեան առաքեաց 'ի ձեռն պատգամաւորի 'ի Կոստանդինուպոլիս։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր, և պատուէր առ դատաւորն և առ քաղաքապետն Երուսաղէմի. ընթեռնուլ զվաւերական գրեանս Հայոց և օրինօք Շէրիի քննել զխնդիրն, և ըստ տրամադրութեան նոցին խափանել զխորհուրդս Շէյխ Մէհէմմէտ Ալէմեայ և զայլոց, և չբռնանալ 'ի վերայ Հայոց հակառակ օրինաց և Կայսերական հրամանին, և մի' ունկն մատուցանել կեղծ և սուտ վկայիցն այլազգեաց, այլ արդարութեամբ լուծանել զխնդիրն, եւ ապա ծանուցանել 'ի Դուռն։

Ի հասանիլ հրովարտակին թէպէտեւ մերժեցաւ այլազգին, և խափանեցաւ գործ և խորհուրդ նորին, սակայն Հայք հանդիպեցան ծախուց և ջնասուց՝ թող զաշխատութիւնն, ՌՃԶ (1617)։ Իսկ Գրիգոր Պատրիարք մինչդեռ պատաղեալէր 'ի զբաղանս և աքնէր լուծանել զվէճս և զդատաստանս, որ ընդ այլազգիս, Լատին կղերք ժամ դիպող համարեցան ինքեանք եւս լինել խոչ ազգին, եւ յաւուր միում արդելին զմիաբանս Հայոց յայրէն Ծննդեան Քրիստոսի, բարձին անտի զկանթեղս և զաշտանակս՝ եւ խափանեցին զպատարագելն եւ զհոգեւոր պաշտօնս նոցա, մինչ զխնկարկելն եւս սարկաւագին. թէպէտեւ բազում անգամ աղաչէր Գրիգոր Պարոն Տէր քաղցր եւ ողբ բանիւք թախանձէր զնոսա. չլինել ասէր կորստեան իրաւանց ազգին. այլ չեղեւ հնար նմա ցածուցանել զկրօնամոլ բարկութիւնս նոցին. այլ օր քան զօր բռնացեալ 'ի վերայ նորա հասուցանէին նմա չարիս. հարստահարէին և կոփէին զմիաբանսն անարգանօք 'ի մտանելն նոցա յայրն Ծննդեան։ Իբրեւ ետես Գրիգոր թէ չիք հնար միաբանիլ ընդ Լատինս, և յանդորրու պահել զիրաւունս իւր. հարկադրեցաւ դիմել 'ի Դուռն Արքունի, և ծանուցանել ըզբռնութիւնս Լատինաց եւ զզրկանս ազգին իւրոյ. վաւերական թղթովք հաստատեալ զսեփականութիւնսն։ Զայս ամենայն զգացուցին մեծամեծք դրանն առ Արքայն Զեվդէ կոչեցեալ՝ և հրամանաւ նորին գրեցաւ հրովարտակ (Խաթ-